ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿ. ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ
ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԿԵՆՏՐՈՆ

# «ԿԱՐՄԻՐ ԱՔԼՈՐ»
# ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

1

ԵՐԵՎԱՆ
1982

ՀԱՅԿ.ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ
ԿԵՆՏՐՈՆ

ԳԻՏԱ - ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ԲՅՈՒԼԵՏԵՆ

Բ ՄԱՏԵՆԱՇԱՐ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՆՈ. 1/65/

# „ԿԱՐՄԻՐ ԱՔԼՈՐ" ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

/Լույս ընծայման 60-ամյակի առթիվ/

Խմբագրական կոլեգիա՝

Խ.Հ.ԲԱՐՍԵՂՅԱՆ/գլխ.խմբագիր/ Ա.Ա. ԽԱՌԱՏՅԱՆ, Հ.Ե.ՂԱԶԱՐՈՍՅԱՆ, Ս.Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆ - 1982

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР

ЦЕНТР НАУЧНОЙ ИНФОРМАЦИИ ПО ОБЩЕСТВЕННЫМ НАУКАМ

НАУЧНО-ИНФОРМАЦИОННЫЙ БЮЛЛЕТЕНЬ

П СЕРИЯ БИБЛИОГРАФИЯ № I/65/

# БИБЛИОГРАФИЯ ЕЖЕНЕДЕЛЬНИКА "КРАСНЫЙ ПЕТУХ"

/К 60-летию выхода в свет/

Редакционная коллегия

Х.А.БАРСЕГЯН /гл.редактор/, А.Е. КАЗАРОСЯН, С.А.САРКИСЯН, А.А. ХАРАТЯН

ЕРЕВАН - 1982

## Կ Ե Ն Տ Ր Ո Ն Ի  Կ Ո Ղ Մ Ի Ց

ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի կենտրոնը պարբերաբար հրատարակում է հայագիտական աշխատությունների ռեֆերատներ, գրախոսականներ, թարգմանություններ և մատենագիտական ցանկեր:

Ներկա բյուլետենը ընդգրկում է Թիֆլիսում հրատարակված ,,Կարմիր աքլոր,,/1921 թ./ երգիծական սատիրական շաբաթաթերթի նյութերը: Մատենագիտությունն ունի ընդարձակ ծանոթագրություններ: Կից տրվում են այդ պարբերականի նյութերը՝ համապատասխան մատենագիտական թեմատիկ ցանկերով:

Մատենագիտությունը կազմել և առաջաբանը գրել է Բ.Գ.Մելյանը: Խմբագիր՝ բանասիրական գիտությունների թեկնածու Ա.Ա.Խառատյան:

## ,,ԿԱՐՄԻՐ ԱՔԼՈՐ,,

/ Լույս ընծայման 60-ամյակի առթիվ/

Երգիծանքը գրականության կարևորագույն ժանրերից մեկն է, ամենապատասխանատու և դժվարին բնագավառը: Գրողը դրանով խարազանում է իր դարաշրջանի սոցիալ-քաղաքական, հասարակական և կենցաղային արատավոր երևույթները, նրա վատ ու ստվերոտ կողմերը, դրանց ներկայացուցիչներին հանձնում է հասարակության արդար դատին: Հայ գրականության մեջ հայտնի են Հակոբ Պարոնյանի, Գաբրիել Սունդուկյանի, Երվանդ Օտյանի, Առանձարի, Լեո Կամսարի, Եղիշե Չարենցի, Մաթևոս Դարբինյանի և էլի շատերի անունները, որոնք երգիծանքի, սատիրայի և ավելի շատ սարկազմի օգնությամբ մերկացրել են ցարական և սուլթանական դաժան իրականությունը: Սակայն իր ժամանակին պահանջ է զգացվել ունենալ նաև պարբերական մամուլ և օրվա հրատապ հարցերը լուսաբանել, քննադատել դրանց միջոցով: Հայերեն լույս ոն տեսել ,,Մեղու,, , ,,Խիկար,, , ,,Խաբարդար,, ,,Զուռնա,, , ,,Աննամուս,, , ,,Մոծակ,, , ,,Կայծեր,, , ,,Հայելի,, , ,,Հոպհոպ,, , ,,Սափրիչ,, , ,,Մախլաս,, , ,,Խաթաբալա,, և այլ երգիծական պարբերականները: Համեմատաբար երկար կյանք է ունեցել Աստվածատուր Երիցյանի խմբագրությամբ Թիֆլիսում լույս տեսած ,,Խաթաբալա,, պատկերազարդ շաբաթաթերթը /1906-1917, 1922,1925,1926 թթ./:

Վրաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո Թիֆլիսում սկըսում են լույս տեսնել բազմաթիվ նոր պարբերականներ: Դրանցից են՝ ,,Կարմիր աստղ,, , ,,Դարբնոց,, , ,,Նոր աշխարհ,, , ,,Կարմիր ծիլեր,, մանկական հանդեսը և այլն:

Դեռ 1920 թ. դեկտեմբերի 15-ից ընդհատակյա պայմաններում լույս էր ընծայվում ,,Կարմիր աստղ,, թերթը /խմբ. Սերգո Խանոյան/: 1921 թ.,,Կարմիր աստղին,, առընթեր հրատարակվում է ,,Կարմիր աքլոր,, երգիծաբանական, սատիրական պատկերազարդ շաբաթաթերթը, գրող Մաթևոս Դարբինյանի խմբագրությամբ:

Մաթևոս Դարբինյանի անունը, որպես երգիծաբանի, արդեն հայտնի էր մինչխորհրդային տարիներից: Նա սկսած 1906 թ. ֆելիետոններ էր տպագրում ,,Խաթաբալա,, երգիծաբանական շաբաթաթերթում՝ Ջնդանյան ստորագրությամբ, իսկ 1916-1917 թթ. բոլշևիկյան ,,Պայքար,, թերթում՝ Ասլան ծածկանունով: Այստեղ են տպագրվել նրա հայտնի ,,Քեռուս խոզը,, ,,Պատռած թմբուկը,, , ,,Մոխրոտ ագռավը,, , ,,Իմ լրագիրը,, և այլ ֆելիետոններ:

,,Կարմիր աքլորը,, հայ խորհրդային առաջին երգիծաբանական սատիրական շաբաթաթերթն է, որի առաջին համարը լույս տեսավ 1921 թ. ապրիլի 10-ին: Այդ նշանակում է, որ Թիֆլիսն ապրում է եռուն, հետաքրքիր

հայկական գրական առօրյայով: Դա բնական էր՝ նախ հաստատվել էր այնքան երազած նոր հասարակարգ և դրա հետ այստեղ էին գտնվում հայ մտավորականության՝ մշակույթի, գրականության, գիտության լավագույն ուժերը, ինչպես նաև կրթության ու լուսավորության բազմաթիվ օջախներ:

,,Կարմիր աքլորին,, թղթակցում են Ատրպետը, Արամ Վրույրը, Եղուարդ Խոճիկը, Սարգիս Ջամալյանը, Անուշավան Ստամբոլցյանը, Աստվածատուր Երիցյանը /,,Խաթաբալա,, երգիծաբանական շաբաթաթերթի նախկին խմբագիրը/, Մարտին Ղարագյոզյանը, Գրիգոր Տալյանը /Գուսան Շերամը/ և ուրիշներ:

,,Կարմիր աքլորը,, շարունակելով նախորդ պարբերականների ավանդները իր պայքարի հիմնական սլաքն ուղղել էր բուրժուական, կալվածատիրական, հոգևորականության խավի մնացորդների և սպեկուլյանտների դեմ: Դրանք ամեն կերպ խանգարում էին նոր կացութաձևի ամրապնդմանը, չէին հաշտվում աշխատավոր մարդկանց՝ իրենց իրավունքների տերը դառնալու փաստի հետ: Շաբաթաթերթը մերկացնում էր նաև Անդրկովկասի բուրժուա-ազգայնական կուսակցությունների իշխողական նկրտումները:

,,Կարմիր աքլորը,, կարճ կյանք է ունեցել: Ինչպես վկայում են ժամանակակիցները, խմբագիր Մ. Դարբինյանին հրավիրում են Երևան կուսակցական աշխատանքի:

Այսպիսով, ,,Կարմիր աքլորը,, լույս է տեսել ապրիլ, մայիս և հունիս ամիսներին. ընդամենը 8 համար: Դրանց եզակի օրինակները պահվում են Ե.Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի Մ.Դարբինյանի ֆոնդում: Թեև նա կարճ կյանք է ունեցել, բայց պարբերական մամուլի պատմության մեջ թողել է իր լուսավոր հետքը:

Խորհրդային հայ արձակագիրների ավագ սերնդի մեջ Մ.Դարբինյանը գրավում է առաջնակարգ տեղ: Չի կարելի խոսել 1920-1930-ական թվականների հայ գրականության մասին և շրջանցել նրան: Նա իր ստեղծագործություններում անդրադարձել է այդ ժամանակաշրջանի բոլոր իրադարձություններին:

Մաթևոս Կարապետի Դարբինյանը ծնվել է Ղազախի գավառի Խոյուզ գյուղում /այժմ՝ ՀՍՍՀ Շամշադինի շրջան/ 1891 թ. հուլիսի 14-ին /հին տ./, գյուղի դարբնի ընտանիքում: Սկզբնական կրթությունն ստացել է հայրենի գյուղում: 1908 թ. Ներսիսյան դպրոցն ավարտելուց հետո զբաղվել է ուսուցչությամբ: 1906-ից թղթակցել է Թիֆլիսում հրատարակվող ,,Ընկեր,, ,,Խաթաբալա,, , ,,Հասկեր,, , ,,Կարմիր աստղ,, , ,,Պայքար,, , ,,Մարտակոչ,, , ,,Պրոլետար,, , ,,Կարմիր ծիլեր,, , ,,Կոմունիստ,,/Բաքու/

և հայերեն լեզվով տպագրվող այլ պարբերականների՝ տպագրելով առակներ, ֆելիետոններ, պատմվածքներ, հեքիաթներ, պիեսներ և այլն:

Թիֆլիսում և այլ վայրերում բեմադրվել են նրա ,,Մինիստրներ,,/1923/ ,,Կոմսոմոլ,, , ,,Գարնանացան,, , ,,Չե-կա,, և այլ պիեսները:

,,Նորք,, հանդեսում 1926 թ. հրատարակվել է ,,Գլուխ պահող Նիկոսը,, վիպակը: Այն առանձին գրքով հրատարակվել է 1929 թ. ,,Նիկոսը,, վերնագրով և Եղ. Չարենցի առաջաբանով: Չարենցը նշում է. ,,Մեր ետհոկտեմբերյան արձակագրության մեջ մենք չգիտենք ոչ մի այլ գիրք, որ այնքան պարզ, այնքան աշխույժ գրված լինի, որքան ,,Նիկոսն,, է: Սակայն գրքի խոշորագույն առավելությունն այն է, որ նրա մեջ իր պարզ արտացոլումն է գտել Հայաստանի գյուղը քաղաքացիական կռիվների շրջանում,,: ,,Նիկոսը,, վիպակի հիման վրա 1931 թ. նկարահանվել է ,,Նիկոսը,, կինոնկարը:

Նրա բազմաթիվ ժողովածուներում և առանձին գրքերում իր ժամանակաշրջանի կյանքն է պատկերված՝ ,,Նորը,, , ,,Զարթնող գյուղը,, , ,,Կոլխոզային,, , ,,Փասադանը,, , ,,Խալիչա,, և այլն: Նույն պատմահեղափոխական թեմայով գրված ,,Նիկոսի,, շարունակությունն են կազմում ,,Ջաղացպան Անտոնը,, , ,,Վերջինը,, վիպակները:

Նույն ջանասիրությամբ ու նվիրումով Մ.Դարբինյանը ստեղծագործել է նաև մանուկների համար: Հայտնի են նրա ,,Սուլդին ու Բուլդին,, , ,,Փոքրիկ կոմունարը,, , ,,Ծավիկն ու հատիկը,, պատմվածքներն ու ժողովածուները, ,,Ցարն ու Մուրճը,, , ,,Ճուտիկներ,, չափածո գործերն ու հեքիաթները:

Նա տնից հեռացավ 1937-ի սեպտեմբերի 19-ին և այլևս չվերադարձավ իր հարազատ հարկի տակ:

,,Կարմիր աքլոր,, շաբաթաթերթի համարների նյութերը զերադասեցինք դասավորել թեմատիկ ձևով՝ նշանավոր դեպքեր ու դեմքեր, լուսավորության և կրթության, գրականության, մամուլի, թատերական հարցեր, հասարակական-քաղաքական բնույթի նյութեր; կենցաղային մանր-մունր զվարճալիքներ, նկարներ և ծաղրանկարներ: Վերջում հարմար համարեցինք կցել գրքերում և պարբերականներում ,,Կարմիր աքլորի,, մասին տպագրված նյութերը: Տրվել են համարյա բոլոր նյութերի համառոտ բովանդակությունը և մատենագիտությունից օգտվողը, հուսով ենք կկողմնորոշվի, եթե դիմելու լինի Ե.Չարենցի անվ. գրականության և արվեստի թանգարանի ֆոնդերին, ուր պահվում են շաբաթաթերթի եզակի համարները:

Հոդվածների վերնագրերում և ենթավերնագրերում պահպանել ենք այն ժամանակի գրությունը, իսկ մեր մատենագիտական տեղեկություններում՝ արդի ուղղագրությունը: Բացառություն է կազմում Թբիլիսի քաղաքի անվանումը, որը մեծ մասամբ գրել ենք այն ժամանակվա ընդունված ձևը՝ Թիֆլիս:

Մատենագիտության մեջ ներկայացվել են նաև շաբաթաթերթի համարների նյութերը ըստ հերթական կարգի: Թե՛ բուն մատենագիտության մեջ և թե՛ այստեղ տվել ենք ծածկանունների վերծանված անվանումները, իսկ հոդվածի վերջում գրել ստորագրությունը այնպես, ինչպես բուն տեքստում, օրինակ ստորագր. Ասլան, կամ Դոշ, կամ Փաքիր, Շմեղ և այլն, իսկ եթե հոդվածագիրը նշված չի եղել, ապա գրել ենք՝ անստորագիր: Որքան հնարավոր է՝ բացահայտել ենք ծածկանունները: Այս հարցում մեզ օգնել են Գ.Լևոնյանի կազմած ծածկանունների ցանկը և Ա.Հայրապետյանի գրախոսականը՝ մեր կազմած ,,Մաթևոս Դարբինյան,, կենսամատենագիտություն/Ե., 1970, 313 էջ/ ձեռնարկի մասին:

Այստեղ ներկայացնում ենք բացահայտված որոշ ծածկանունները և համառոտակի կենսագրությունները.

Ա ղ ա բ ա բ  Հ ա կ ո բ - ստորագրել է Ալմազ, Աղաբաբյան Հակոբ Բեժանի /1875-1926/ մանկական գրող: Ծնվել է Ղազախի /այժմ ՀՍՍՀ Նոյեմբերյանի շրջանի/ Կողբ գյուղում: Զբաղվել է մանկավարժությամբ և գրել հիմնականում կրտսեր տարիքի երեխաների համար:

Ա տ ր պ ե տ - ստորագրել է Ա - Տ, Մուբայաջյան Սարգիս Մկրտչի /1860-1937/, գրող, թարգմանիչ, մանկավարժ: Ծնվել է Կարսում: Գրել է մի շարք գեղարվեստական գործեր: 1890 թ. լույս է ընծայել ,,Շուշան,, օպերայի լիբրետոն, որի երաժշտությունը գրել է Կարա Մուրզան: Ընթերցող լայն զանգվածներին հայտնի է "Տժվժիկ" պատմվածքով:

Ա ր ա զ ի  Մ ո վ ս ե ս - ստորագրել է Հաննի, Հարությունյան Մովսես Մելիքի, ծնվել է 1878 թ. մարտի 20 /ապրիլի 1/-ին Շուլավեր /այժմ Վրացական ՍՍՀ Շահումյան ավան/ գյուղում: Գրել է արձակ բազմաթիվ գործեր: Մահացել է 1964-ի դեկտեմբերի 22-ին, Երևանում/:

Դ ա ր բ ի ն յ ա ն  Մ ա թ և ո ս  Կ ա ր ա պ ե տ ի - ստորագրել է Ասլան, Դարբին, Մա-դո, Դոմինո, Ծերուկ... և այլ ծածկանուններով:

Դ ո չ ո յ ա ն  Ա ր տ ա շ ե ս - ստորագրել է. Ալմազ, Աքլորյան, Աքլորունի, Դ.,Դոշ.[1]:

Ե ր ի ց յ ա ն  Ա ս տ վ ա ծ ա տ ու ր /Բողդան/ Սարգսի - ստորագրել է. Կակուլի, Օրթաճալեցի, /1872-1929/, հրապարակախոս,,Խաթաբալա,, և ,,Սուրհանդակ,, պարբերականների խմբագիր-հրատարակիչ: Ծնվել է

---------

1 Դոչոյան Արտաշեսի և Խաչմանյան Հմայակի մասին կենսագրական տեղեկություններ չենք հայտնաբերել:

Թիֆլիսի մերձակա Ծղնեթ գյուղում, քահանայի ընտանիքում: Սովորել է Ներսիսյան դպրոցում: /Նրա մասին տես Ավչյան Ս. Գրական ակնարկներ:-Թբիլիսի, ,,Մերանի,, 1978, էջ 84-91/:

Խ ա չ մ ա ն յ ա ն  Հ մ ա յ ա կ - ստորագրել է՝ դեվ,

Խ ո ճ ի կ յ ա ն  Է դ ու ա ր դ  Մ ա մ ա ս ի - ստորագրել է Էդուարդ Խոճիկ/1900-1962/, գրող-երգիծաբան, ծնվել է Թիֆլիսում, արհեստավորի ընտանիքում: Սովորել է Ներսիսյան դպրոցում: Նա 1926-27 թթ. հիմնադրել և խմբագրել է ,,Կարմիր մոծակ,, երգիծական հանդեսը, եղել է"Աշխատանք,, հանդեսի աշխատակիցը և ,,Անաստված,, հանդեսի պատասխանատու քարտուղարը: Աշխատակցել է մի շարք այլ պարբերականների ու տպագրել պիեսներ և խաղացել որպես դերասան:

Ս տ ա մ բ ո ւ լ ց յ ա ն  Ա ն ո ւ շ ա վ ա ն  Ա վ ե տ ի ս ի - ստորագրել է Աստղ.,ծնվել է Ղարսում; 1888 թ. փետրվարին, եղել է Թիֆլիսի նո.70 հայկական միջնակարգ դպրոցի դիրեկտոր: Աշխատել է նաև քաղաքային լուսբաժնում, որպես մեթոդիստ: Թղթակցել է ժամանակի պարբերական մամուլին: Մահացել է 1937-ին:

Վ ր ու յ ր  Ա ր ա մ - ստորագրել է. Աքանդազյան, Տեզ, Փաքիր,/Քաջունի Մինաս Մինասյան 1863-1924/, խմբագրել է ,,Կարմիր աքլոր,, երգիծական շաբաթաթերթի 1921 թ. 29 մայիսի նո.7-ը և շաբաթաթերթում տպագրել հոդվածներ: Եղել է դերասան և խմբագրել ,,Հուշարար,, երկշաբաթաթերթը:

,,Հուշարար,, թատերական, գրական-գեղարվեստական պատկերազարդ երկշաբաթաթերթ, Թիֆլիս, 1907-1909, 1912-1913, խմբագիր-հրատարակիչ՝ Մարիամ Մեհրաբյան /փաստացի՝ Արամ Վրույր/:

Հայտնի դերասան Արամ Վրույրը Ն.Մառի մերձավոր աշխատակիցներից և օգնականներից է եղել, իբրև արշավախմբի լուսանկարիչ, Անիի մասին դասախոսություններով ու նկարների ցուցադրությամբ հանդես է եկել Անդրկովկասի զանազան քաղաքներում:

Ք ա մ ա լ յ ա ն  Ս ա ր գ ի ս  Ա վ ե տ ի ք ի - ստորագրել է. Շմեղ, /1860-1934/, գրող, բանահավաք, թարգմանիչ: ,,Կարմիր աքլորին,, թղթակցել է ,,Շմեղ,, ծածկանվամբ: Ծնվել է Շուլավեր /այժմ Շահումյանավան/գյուղում: Զբաղվել է ուսուցչությամբ Շուլավերի, Թիֆլիսի և այլ վայրերի մի շարք դպրոցներում: /Տես Ուղեցույց գրականության և արվեստի թանգարանի գրական ֆոնդերի.-Ե.,1962, էջ 154-156:-Հայ մշակույթի օրրանը,- Ե., Լույս, 1971, էջ 315-319/:

Բ.Գ.ՄԵԼՑԱՆ

## ,,ԿԱՐՄԻՐ ԱՔԼՈՐ,, ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

## ՆՇԱՆԱՎՈՐ ԴԵՄՔԵՐ ՈՒ ԴԵՊՔԵՐ

1. ԱՂԱԲԱԲ ՀԱԿՈԲ: Կանչը: /Չափածո/: 1921,17 ապրիլի, նո.2: Ստորագր. Ալմազ: Վրաստանում խորհրդային կարգերի հաստատումը և վերափոխված կյանքի պատկերը:

2. ԱՇՈՒՂՅԱՆ: Խրիմյան և իշխան Գոլիցին: 1921, 15 մայիսի, նո.6: Ստորագր. Աշուղյան: Հայոց կաթողիկոս Խրիմյան Հայրիկի և փոխարքա Գոլիցինի զրույցը: Մոտիկ անցյալում ցարիզմի ցուցաբերած անտարբերությունը հայ ժողովրդին հուզող հարցերի նկատմամբ:

3. ԴԱՐԲԻՆՅԱՆ Մ. Բոլորին հայտնի պատմություն: /Մայիսի մեկի առթիվ/ 1921, 1 մայիսի, նո. 4: Ստորագր. Ասլան: Բանվորների հեղափոխական անցյալից: Մայիսի 1-ը՝ միասնության և համերաշխության միջազգային օր աշխարհի բոլոր մշակների համար:

4. ԴԱՐԲԻՆՅԱՆ Մ. Իմ զատկական նվերները: /Նաև չափածո հատվածներ/: 1921, 1 մայիսի, նո.4: Ստորագր. Ծիրուկ: Երգիծաբանը հոդվածի միջոցով նվերներ է մատուցում Հայաստանի Հնղկոմին, Երիտասարդ Վրաստանի խորհրդային իշխանությանը, Հայաստանից փախած նախկին մինիստրներին: Հիշատակվում է նաև Նժդեհի, Ս.Վրացյանի, Լևոն Քալանթարի և այլ մարդկանց անուններ:

5. ԴԱՐԲԻՆՅԱՆ Մ. Ինտերվյու: 1921, 8, 15 մայիսի, նո.նո.5,6: Ստորագր. Ասլան: Քննադատում է նոր խորհրդային իշխանության որոշ հիմնարկների ոչ ճիշտ ու նպատակասլաց աշխատանքը: Հիշատակում է մի շարք պետական գործիչների ու մտավորականների անուններ՝ Բագրատ Նավասարդյանի, Տիգրան Նազարյանի, Պողոս Աբելյանի, Արամ Տեր-Գրիգորյանի, Լեոյի, Հովհաննես Մալխասյանի, Արամայիս Երզնկյանի և ուրիշների:

6. ԴԱՐԲԻՆՅԱՆ Մ. Մայիսի մեկը - Զատիկ: /Առաջնորդող: Մի մասը չափածո/: 1921, 1 մայիսի, նո.4: Ստորագր. Դարբին: Պատմական ակնարկ, թե ինչպես մեր երկրի բանվորները հասան հաղթանակի: Նրանք դրա համար տարիներ շարունակ պայքարել են: Նա շաբաթաթերթի անունից ողջունում է աշխատավորությանը այդ տոնի առթիվ:

7. ԴԱՐԲԻՆՅԱՆ Մ. Մի շաբաթ: /Արձակ, նաև չափածո հատվածներ/: 1921, 8 մայիսի, նո.5: Ստորագր. Դարբին: Ընդդեմ այն տարրերի, որոնք չեն

հասկացել Հոկտեմբերյան հեղափոխության նշանակությունը և մնում են նախկին հոգեբանությամբ: Խոսվում է նաև հեղափոխության մեծ առաջնորդ Վ.Ի. Լենինի մասին:

8. ԴԱՐԲԻՆՅԱՆ Մ. Պատերազմ: /Առաջնորդող/: 1921, 15 մայիսի,նո.6: Ստորագր. Դարբին: Ընդդեմ բուրժուական երկրների կապիտալիստների ու հարստահարողների, որոնք ոսկի դիզելու մոլուցքով տարված աշխատավոր մարդկանց ներքաշել են պատերազմի մեջ: Նրանք հաշվեհարդար են տեսնում արդարության համար պայքարողների հետ, ինչպես օրինակ՝ Կարլ Լիբկնեխտի և Ռոզա Լյուքսեմբուրգի չարանենգ սպանությունն էր: Հակառակ դրանց Կարմիր բանակը պաշտպանում է աշխատավորության շահերը:

9. ԴԱՐԲԻՆՅԱՆ Մ. Քոթոթը:/Պատմվածք/: 1921, 1 մայիսի, նո.4: Ստորագր. Մա-Դօ: Աշխատավոր գյուղացի Գասպարը գործ որոնելու նպատակով ընկնում է արդյունաբերական Բաքու և զինվորագրվում ազատագրական պայքարին: Նրան գործարանատերը ծաղր ու ծանակի է ենթարկում, բայց նա կարողանում է վրեժխնդիր լինել տիրոջից:
Ներկայացված է աշխատավորության շքերթը մայիսի մեկի օրը, որոնք ,,Ինտերնացիոնալ,, են երգում: Դրանք նոր աշխարհի տերերն են:

10. ԴՈՇՈՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ: Ողջույն նրան... /Նվեր բանվորներին իրենց հարազատ տոնի առթիվ/: /Չափածո չորս քառյակ/: 1921, 1 մայիսի, նո.4: Ստորագր. Դոշ.: Բանաստեղծության մեջ փառաբանում է բանվոր դասակարգի արդար աշխատանքը, որը այն նվաճել է պայքարի գնով: Նա իր քրտինքով ու իր գործով ազատություն է պարգևել մեր աշխարհին:

11. ԵՐԻՑՅԱՆ ԱՍՏՎԱԾԱՏՈՒՐ: Միր քաղաքի խաբարնքը... /Արծակ/: 1921, 29 մայիսի, նո.7: Ստորագր. Կակուլի: Ընդդեմ նրանց, ովքեր չեն ընդունում Հոկտեմբերյան հեղափոխության ստեղծած նոր կարգերը և դեմ են խոսում Վ.Ի.Լենինին և բոլշևիկյան գաղափարախոսությանը: Իսկ հոդվածագիրը ողջունում է աշխատավորության շահերի այդ պաշտպաններին:

12. ԽԱՉՄԱՆՅԱՆ ՀՄԱՅԱԿ: Հեռագրեր ու ռադիոներ: /Մայիսմեկյան տոնակատարության առթիվ/: 1921, 1 մայիսի, նո.4: Ստորագր. Դեվ: Խմբագրությունը ստացել է աշխարհի բոլոր ծայրերից ողջունի հեռագրեր: Մոսկվա, Վ.Ի.Լենինից.,,Իմ սրտաբուխ ողջույնը Խորհրդային Վրաստանի պրոլետարիատին: Ցանկանում եմ սերտ միություն և բեղմնավոր աշխատանք,,: Ողջույններ են հաղորդել նաև Հայաստանից, Ադրբեջանից և այլ վայրերից:

13. ՄԱՅԻՍԻ 26-Ը: /Առաջնորդող/: 1921, 29 մայիսի, նո.7: Անստորա-

գիր: Մենշևիկյան կառավարության օրոք Վրաստանի անկախությունը ծաական էր: Նրանք գտնվում էին կախման մեջ Անգլիայից, Ֆրանսիայից և Գերմանիայից: Վրաստանում 1921 թ. փետրվարից հետո ստեղծվեց խորհրդային իշխանություն:

14. ՇԵՐԱՄ: ,,Արի աքլոր, կարմիր աքլոր,,: /Չափածո, մայիսի մեկի առթիվ/: 1921 թ. 1 մայիսի,նո.4: Ստորագր. Գր. Տալ.: Գուսան Շերամը առաջիններից մեկն էր, որ այս բանաստեղծությամբ ողջունեց նոր կարգերի հաստատումը Վրաստանում: Նա անծամբ Մ.Դարբինյանին է հանձնել այս.

Արի աքլոր, կարմիր աքլոր
Ձեն ծենի տանք ու կանչենք,
Ընկնենք, մանգանք արար աշխարհ,
Զանգի նման ղողանջենք:
Ձեն տանք բոլոր բանվոր,մշակ
Տանջված մարդկանց աշխարհի,
Ասենք՝ ծագեց նոր արեգակ,
Ելեք տոնենք նոր տարի:
Այսօր մեկ տեղ Զատիկ Մայիս
Ձեռք-ձեռք բռնած լույս ընկան,
Դեռ այսպես բան չէ տեսնված,
Հազիվ իրարու գտան:

ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

15. ԴԱՐԲԻՆՅԱՆ Մ. Տիկին Շուշանի դպրոցը: 1921, 12 տունիսի, նո.8: Ստորագր. Դոմինո: Կոչ է արվում նոր կառավարությանը օգնության ձեռք մեկնել Շուշան Մանուկյանի մասնավոր դպրոցին, որը հասարակական կարգով 13 տարի կրթել է հարյուրավոր երեխաների: Նա այժմ նման ձևով աշխատել չի կարող:

16. ԾՈՎԻԿ: Մի զրվանքա հացը:/Հայ ուսուցչի մասին/: 1921,17 ապրիլի, նո.2: Ստորագր. Ծովիկ: Հայ ուսուցչի նյութական անապահով կյանքի մասին, որ մի կտոր հաց վաստակելու համար ստիպված է լինում դառնալու մի քանի միությունների ու կազմակերպությունների անդամ: Խոսվում է նաև ապագայում կրթության ու լուսավորության պրոբլեմների կանոնավորման մասին:

17. ԿԵՑՑԵ ԵՐՐՈՐԴ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԸ: Կեցցե համաշխարհային հեղափոխության Կարմիր Մոսկվան: Կեցցե համաշխարհային հեղափոխության ավանգարդ Կարմիր բանակը: /Շաբաթաթերթի էջերում, խոշոր գունավոր տառերով տպա-

գրրվել են նման բազմաթիվ լոզունգներ և զանազան կոչեր/: 1921, 1 մայիսի, նո.4:

18. ՂՈՒԿԱՍ: Նորագույն պատմություն մը: /Կարդալ հավատոյ հանգանակի եղանակով/: 1921, 17 ապրիլի, նո.2: Ստորագր. Ղուկաս: Ընդդեմ գրականագետ Նիկոլ Աղբալյանի:

19. ՎՐՈՒՅՐ ԱՐԱՄ: Կեցցե փոքր ազգությունների իրավունքների պաշտպան Խորհրդային Ռուսաստանը: / Նման բովանդակության կոչեր ու լոզունգներ կան շաբաթաթերթի հոդվածների հետ ներդաշնակված: Այս մեկի տակ դրըված է Արամ Վրույրի անունը/: 1921,29 մայիսի, նո.7:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՄՈՒԼԻ ՀԱՐՑԵՐ

20. ԴԱՐԲԻՆՅԱՆ Մ. Խմբագրության կողմից: /,,Կարմիր աքլորին,,Թղթակցելու մասին/: 1921,10 ապրիլի, նո.1, 17 ապրիլի, նո.2,24 ապրիլի, նո.3, 1 մայիսի, նո.4, 8 մայիսի, նո.5, 15 մայիսի, նո.6, 29 մայիսի, նո.7, 12 հունիսի, նո.8: Անստորագիր: Դիմելով իր ընթերցողներին հրավիրում է ծիծաղելու և ծիծաղեցնելու ովքեր շնորհք ունեն: Ապա երգիծելով տալիս է այն պայմանները, որը կարող են ստանալ որպես հոնորար: Ապա նշվում է խըմբագրության հասցեն, որը Մ.Դարբինյանի բնակարանն է՝ Թիֆլիս, Աբաս-Աբաղյան փողոց նո.7:

21. ԴԱՐԲԻՆՅԱՆ Մ. Ծուղրուղու... /Չափածո, շաբաթաթերթի խնդիրների մասին/: 1921, 10 ապրիլի, նո.1, 17 ապրիլի, նո.2, 24 ապրիլի, նո.3, 1 մայիսի, նո.4, 8 մայիսի, նո.5, 15 մայիսի, նո.6, 29 մայիսի, նո.7, 12 հունիսի, նո.8: Անստորագիր: Բանվորին ու գյուղացուն աշխատանքի ու խաղաղ շինարարության հրավերի է կոչում:

22. ԴԱՐԲԻՆՅԱՆ Մ. Մեր աքլորը:/Առաջնորդող/: 1921, 10 ապրիլի,նո.1: Ստորագր. Դարբին: Հոկտեմբերյան հեղափոխության նվաճումների և դրանք պայքարի գնով պահպանելու մասին, քանի որ երկրի նախկին տերերը և կապիտալիստական երկրների իմպերիալիստները ցանկանում են ոչնչացնել մեր երկիրը:

23. ԴԻՄԱԿ: Մասների գրողները: 1921,12 հունիսի, նո.8: Ստորագր.Դիմակ: Հայ դասական գրողների նկատմամբ ոչ ճիշտ վերաբերմունքի. Հովհ.Թումանյանի, Լեոի և մյուսների գրական արժեքները մերժելու մասին: Եվ դա արվում է գրողների ժողովում քվեարկության միջոցով: Ժողովականները ձայն են տալիս այնպիսի մարդկանց, որոնք ոչինչ չունեն գրած:

24. ԴՈՇՈՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ: Լսեցեք:/Զափածո/: 1921,24 ապրիլի,նո.3: Ստորագր. Դ.[1]:,,Կարմիր աքլորի,, ձայնից ահարկու հարուստ ու կուլակ դարձել են նրան խնկարկու: Հետևապես հարկավոր է կարդալ այն և պատմել նաև մյուսներին:

25. ԴՈՇՈՅԱՆ ԱՐՏ. Կարմիր աքլորին:/Զափածո/: 1921, 8 մայիսի, նո.5: Ստորագր. Ալմազ: Քննադատում է բուրժուական հասարակարգի մնացորդներին, որոնք խանգարում են խորհրդային իշխանության առաջընթացին: Փառաբանում է ,,Կարմիր աքլորի,, առաջ քաշած հարցերը:

26. ԸՆԿԵՐՆԵՐ: 1921, 29 մայիսի, նո.7: Անստորագիր: Շաբաթաթերթը սակավ տպաքանակով լույս ընծայվելու մասին: Դիմում է ընթերցողներին կարդալ խմբերով և փոխանցել ուրիշներին: Չպատռել այն:

27. ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ: Փործանքների բժշկարան: 1921,12 հունիսի նո.8: Ստորագր. Աստղ: Քննադատում է որոշ կուսակցությունների սխալ դիրքորոշումը գրական հոսանքների նկատմամբ:
Խոսվում է նաև Կարա-Դարվիշի, դոկտոր Մարինետտի, Չ.Դարվինի,Երվանդ Լալայանի և ուրիշ նշանավոր մարդկանց մասին:

28. ՎՐՈՒՅՐ ԱՐԱՄ: Իմ հուշատետրից: Մայիսի 15-ին 1921 թ.: 1921, 29 մայիսի, նո.7: Ստորագր. Ա.Վ.: ,,Կարմիր աստղ,, լրագրում տպագրված Ֆելիետոնի և նրա թողած դրական հետևանքների մասին: Նա կոչ է անում նման ձևով ի հայտ բերել բացասական տիպերին:

29. ՓՈՍՏ-ԱՐԿՂ: /Պատասխանում է իր հոդվածագիրներին/: 1921,29 մայիսի, նո.7: Անստորագիր: Իր թղթակիցների ուշադրությունն է հրավիրում նյութեր գրելու և ինչ պատճառներով նրանց գրածները չտպագրվելու մասին: Կոչ է անում լրագրի նյութերը կարդալ ուրիշների համար, չպատռել ու չփըչացնել այն, տպաքանակի քիչ լինելու պատճառով:

30. ՓՈՍՏ-ԱՐԿՂ: 1921, 8 մայիսի, նո.5: Անստորագիր: Չափածո և արձակ տեքստերով պատասխանում է իր հոդվածագիրներին,թե ինչ պատճառներով չեն տպագրվում Էք-Սյուզի, Լորիկ-Նստի, Հեքիմ Նիկոլի տղա Գևոյի և ուրիշների բանաստեղծությունները և հոդվածները: Կոչ է անում Սալ-Մանին, Լեոնին, Ատրպետին, Երմերին և մյուսներին թղթակցելու շաբաթաթերթին:

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

31. ԿՈԿՈԱՆ-ՄԱՐԻԿ: Ռեցենզիստ:/Թիֆլիսի թատրոնների խաղացանկերի մասին/: 1921,15 մայիսի, նո.6: Ստորագր. Կոկոան-Մառիկ: Արտիստական

---

1 Դ. ստորագրությունը Արտ. Դոշոյանին է վերագրել գրականագետ Աշոտ Հայրապետյանը: Տես - Սովետ գրականություն:1971,նո.7,էջ 153:

թատրոնում մայիսի 12-ին, բեմադրվել է Շիրվանզադեի ,,Պատվի համար,, պիեսը, ուր դերերը կատարել են՝ Մարգարիտ՝ Մամուլյանը, Օթարյան՝Ոսկ-տունի, Ելիզբարով՝ Թորոսյանը, Սուրեն՝ Երեմյանը, Ռոզալյա՝ Հայկունի և այլ դերասաններ: Հոդվածագիրը պահանջում է վերանայել թատրոնների խաղացանկը: Տեղ տալ հայ դասական գրողներին ու ժամանակակից հեղինակ-ների նոր գործերին:

32. ԿՈԿՈԱՆ-ՄԱՐԻԿ: Սեզոնի փակումը: Գեղարվեստ: 1921,12 հունիսի, նո.8: Ստորագր. Կոկոան-Մարիկ: Քննադատում է պետական առաջին դրամատիկ թատրոնը /նախկին Արտիստական ընկերության/, որ հունիսի 9-ին փակել է թատերական սեզոնը: Չունի կայուն խաղացանկ: Նոր պիեսներ չի բեմադ-րում: Խոսվում է նաև ,,Դևերի քրքիջը,, և Ֆուլդա Լյուդվիգի ,,Հիմար,, պիեսները բեմադրելու մասին:

33. ՎՐՈՒՅՐ ԱՐԱՄ: Ց.ՈՍԿԱՆՅԱՆԻ կոլեկտիվ ներկայացումները ,,Ազատ թատրոնում,,: 1921,29 մայիսի, նո.7: Ստորագր. Աքանդազյան: Քննադա-տում է Հովսեփ Ոսկանյանի թատերախմբին, որ միշտ ներկայացնում է Աշուղ Ջիվանու ,,Աշուղ Ղարիբ,, և Ուզեիր Հաջիբեկովի ,,Արշին մալ-ալան,,պի-եսները: Խորհուրդ է տալիս բեմադրել Շիրվանզադեի ,,Պատվի համար,, , ,,Նա-մուս,, դրամաները: Միաժամանակ քննադատում է Մ.Տեր-Առաքելյանի վատ դերա-կատարումները:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ՆՅՈՒԹԵՐ

34. ԱՏՐՊԵՏ: Էդ դրանը չեմ մտնի: 1921, 17 ապրիլի, նո.2: Ստորագր. Ա-Տ: Ընդդեմ հոգևորականների:

35. ԱՐԱԶԻ ՄՈՎՍԵՍ: Կարմիր աքլորի քաջագործությունները: 1921, 10 ապրիլի, նո.1: Ստորագր. Հաննի[1]: Մենշևիկյան լիդերներ՝ Կեդիայի և Ռա-միշվիլու մասին, որոնք հեղափոխության հաղթանակից հետո ծողոպրել էին արտասահման:

36. Գ.Մ.Խ.: Միխկս գալիս ին: 1921, 8 մայիսի, նո.5: Ստորագր.Գ.Մ.Խ.: Անդրկովկասի ազգայնական կուսակցությունների՝ դաշնակների, մենշևիկ-ների և մուսավաթականների լիդերների քաղաքական սնանկության մասին:

37. ԴԱՐԲԻՆՅԱՆ Մ. Բարի տեսություն:/Առաջնորդող/: 1921,12 հու-նիսի,նո.8: Ստորագր. Դարբին: Դաշնակցության ,,Փրկության կոմիտեի", ստահոդ լուրերի մերկացումը:

38. ԴԱՐԲԻՆՅԱՆ Մ. Դեկլարացիա:/Առաջնորդող/: 1921,17 ապրիլի,նո.2 Ստորագր. Դարբին: Ընդդեմ Հայ հեղափոխական դաշնակցության Վրաստանի

----------

1 Ծաղրաթերթի այս հոդվածը Հաննի ստորագրությամբ թանգարանի աշխատակից-ները վերագրում են Հովհ. Թումանյանին: Թերթի այս համարից մեկ օրինակ պահվում է Ե.Չարենցի անվ. գրականության և արվեստի թանգարանի Մ.Արազի ֆոնդում՝ նո.553, որը հիմք է տալիս մեզ ասելու, որ այն գրվել է Մ.Ա-րազու կողմից: Այլապես նա չէր պահի միայն այդ համարը:

Կենտրոնական Կոմիտեի ,,Աշխատավորական,, ձախ թևի սոցիալիստական ինտերնացիոնալի հայկական հատվածի դեկլարացիայի, որը տպագրվել է ,,Կարմիր աստղ,,թերթի 1921 թ.նո.33-ում:

39. ԴԱՐԲԻՆՅԱՆ Մ. Էշը՝ Մարգարե: /Չափածո առակ ընդդեմ հոգևորականության/: 1921, 10 ապրիլի, նո.1: Ստորագր. Ասլան:

40. ԴԱՐԲԻՆՅԱՆ Մ. Հատիկը: 1921, 10 ապրիլի, նո.1: Ստորագր. Դոմինո: Ընդդեմ տատանվող տարրերի, որոնք Թ.[1] գյուղի Մարկոս բեգի ջրաղացի ցորնատան ծայրին ժամմբացող ցորենի հատիկի նման նոր իրականությունը չեն ընդունում, տատանվում են:

41. ԴԱՐԲԻՆՅԱՆ Մ. Տիրացու Պասկևիչը:/Առաջնորդող/: 1921, 24 ապրիլի, նո.3: Ստորագր. Դարբին: Ընդդեմ դաշնակցության լիդեր Ս.Վրացյանի: Խոսվում է նաև 1828 թ. ցարական գեներալ Պասկևիչի մասին:

42. ԴԱՇՈՅԱՆ ԱՐՏ. Երկու աքլոր:/Չափածո առակ/: 1921,29 մայիսի, նո.7: Ստորագր. Աքլորունի: Ընդդեմ Անգլիայի,Իտալիայի և Ֆրանսիայի իմպերիալիստների նվաճողական ձգտումների:

43. ԴՈՇՈՅԱՆ ԱՐՏ. Կուսակցությունների համագումարը Թիֆլիսում: 1921, 24 ապրիլի, նո.3: Ստորագր. Աքլորյան: Ընդդեմ մենշևիկյան լիդերների:

44. ԴՈՇՈՅԱՆ ԱՐՏ. Մենշևիկների վերջին րոպեները Թիֆլիսում: 1921, 10 ապրիլի, նո.1: Ստորագր. Դոշ.: Ընդդեմ մենշևիկյան Վրաստանի կառավարության ղեկավարների, որոնք ստիպված հեռանում են երկրից:

45. ԴՈՇՈՅԱՆ ԱՐՏ. Տակսան:/Չափածո/: 1921,24 ապրիլի,նո.3:Ստորագր. Դոշ.: Քննադատում է առևտրականներին, որոնք դեմ են պետության կողմից նշանակված գներին և մտադիր են սպեկուլյացիա անել:

46. ԴՈՇՈՅԱՆ ԱՐՏ. Տերտերի գանգատը:/Չափածո/: 1921, 17 ապրիլի, նո.2: Ստորագր. Տեր Կեճճո՝ միաբան Բողազավանքի ու եկեղեցու: Ընդդեմ քահանաների, որոնք դժգոհում են նոր կարգերից, քանի որ ժողովուրդը այլևս չի հավատում իրենց և մոռացել է եկեղեցական ծեսերը: Այս պատճառով իրենք զրկվել են եկամտի աղբյուրներից:

47. ԽԱՉՄԱՆՅԱՆ ՀՄԱՅԱԿ: Նամակներ: 1921,10 ապրիլի, նո.1: Ստորագր. Դեվ: Ընդդեմ Անդրկովկասյան ազգային կուսակցությունների ղեկավարների, որոնք ապաստանելով արտասահմանում,նամակներով արդարացնում էին իրենց նախկին գործողությունները:

---------

1 Թ.գյուղը հոդվածագիր Մ.Դարբինյանի հայրենի Թոփուզ գյուղն է,այժմ ՀՍՍՀ Շամշադինի շրջանում:

48. ԽԱԶՄԱՆՅԱՆ ՀՄԱՅԱԿ: Նամակներ: 1921, 5 մայիսի, նո.5: Ստորագրր. Դեվ: Ընդդեմ Անդրկովկասի նախկին մինիստրների, նրանց քաղաքական սնանկության բացահայտումը:

49. ԽԱԶՄԱՆՅԱՆ ՀՄԱՅԱԿ: Նամակներ: 1921, 12 հունիսի, նո.8: Ստորագր. Դեվ: Ընդդեմ Անդրկովկասից փախած և Թավրիզում, Թեհրանում և այլուր ապաստանած հարուստների, որոնք չքմեղ ձևանալով ցանկանում են վերադառնալ հայրենի երկիր:

50. ԽՈԺԻԿ ԷԴՈՒԱՐԴ: Ուժը:/Չափածո առակ/: 1921, 15 մայիսի, նո.6: Վագրը, գայլը և մրջյունը առակում ներկայացվում են իրենց բնատուր հատկություններով: Առակի միտումն այն է, որ հայ աշխատավոր ժողովուրդը հասավ հաղթանակի և երկրում ստեղծեց խորհրդային իշխանություն:

51. ԾՈՎԻԿ: Աթոռները:/Մի մասը չափածո/: 1921, 24 ապրիլի, նո.3: Ստորագր. Ծովիկ: Հին վաճառականի՝ երբեմնի իր ազդեցությունն ու ուժը վերականգնելու փորձերի երգիծումը:

52. ԾՈՎԻԿ: Ախ, ինչո՞ւ կուլ չտվի... 1921, 8 մայիսի, նո.5: Ստորագր. Ծովիկ: Ընդդեմ դաշնակցության ազգային անհեռատես քաղաքականության, որը ծանր աղետներ պատճառեց ժողովրդին:

53. ԾՈՎԻԿ[1]: Կորեկի պատմությունը: /Արձակ առակ/: 1921,12 հունիսի, նո.8: Ստորագր. Ծովիկ: Ընդդեմ ապաշնորհ այն մարդկանց, որոնք ոչ մի բանի ընդունակ չեն, բայց ցանկանում են բարձր պաշտոն ու դիրք ունենալ ինչպես կորեկն է ցանկանում փոխարինել ցորենին:

54. ԿԱՐՄԻՐ ԱՔԼՈՐ: Նժդեհը: /Չափածո/: 1921, 12 հունիսի, նո.8: Ստորագր. Կարմիր աքլոր: Ընդդեմ Զանգեզուրում ծվարած զորավար Նժդեհի:

55. ԿԱՐՄԻՐ ԱՔԼՈՐԸ: /Արձակ/: 1921,8 մայիսի, նո.5: Անստորագիր: ,,Կարմիր աքլորը,, կոչ է անում իր ընթերցողներին, որ նոր այգաբաց է սկսվել և հարկավոր է լծվել արդար աշխատանքի: Իսկ խավար ուժերը փախել և թաքնվել են արտասահմանում:

56. ԿԱՐՄԻՐ ԱՔԼՈՐԸ սրտի անհուն կսկիծով-քերկրանքով հայտնում է, որ ապրիլի 2-ին երեկոյան ժամը 18 և կեսին մահացավ դաշնակցության կառավարությունը: 1921, 10 ապրիլի, նո.1: Անստորագիր: Հին բանակի գլխավորների երգիծումը:

-------------

1 Թեև հավաստի տեղեկություններ չունենք, բայց մեր կարծիքով Ծովիկ ստորագրությունը նույնպես Մ.Դարբինյանինն է, քանի որ ոճը նման է:

57. ԿՈԿ: Գործ ըրինք:/Զափածո/: 1921,12 հունիսի, նո.8: Ստորագր. ԿՈԿ: Հայ բուրժուական կուսակցությունների անհեռանկարայնությունը:

58. ՀԱՄԲԵՐՈՒԹՅՈՒՆ: /Մանր-մունր/: 1921, 29 մայիսի, նո.7: Անստորագիր: Հոգևորականության երգիծումը:

59. ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ: 1921,12 հունիսի, նո.8: Անստորագիր:Խորհրդայնացման ժամանակ երկրից հեռացած շատ ընտանիքներ, մարդիկ վերադառնում են: Շաբաթաթերթը կոչ է անում նրանց հարազատներին գնել դիմավորելու:

60. ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ: Անկետա: 1921, 24 ապրիլի, նո.3: Ստորագր. Աստղ: Այն մարդկանց մասին, որոնք դիմել են Վրաստանի Կոմկուսի կենտկոմին իրենց կուսակցության մեջ ընդունելու առթիվ:

61. ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ: Անկետա: 1921,29 մայիսի, նո.7: Ստորագր. Աստղ: Կուսակցության սկզբունքայնության մասին:

62. ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ: Փորձանքների բժշկարան: 1921,15 մայիսի, նո.6: Ստորագր. Աստղ: Խորհրդային իշխանություն, կոմունիզմ, Կարմիր բանակ և նման նոր բառերը և դրանց արժեքը լեզվի համար:

63. ՎՐՈՒՅՐ ԱՐԱՄ: Ինչպես է ապրում ,,խեղճ,, սպեկուլյանտը: 1921, 29 մայիսի, նո.7: Ստորագր. Տեգ: Սպեկուլյանտների դեմ:

64. ՎՐՈՒՅՐ ԱՐԱՄ: Նոր հարուստները:/Զափածո/: 1921, 8 մայիսի, նո.5: Ստորագր. Ֆաքիր: Քննադատում է սպեկուլյանտներին, հաշվապահներին, դերձակներին,խանութպաններին և մերկացնում նրանց մակաբույծ նկարագիրը:

65. ՓՈՍՏ-ԱՐԿՂ: Թիֆլիս, Կարմիր գուսանին:/Զափածո/: 1921, 24 ապրիլի, նո.3: Անստորագիր: Կուսակցական սկզբունքայնության պաշտպանությունը, որը վեր է նեղ գործնական շահերից:

66. ՔԱՄԱԼՅԱՆ ՍԱՐԳԻՍ: ,,Պահպանիչը,, փոր չի կշտացնում: 1921,12 հունիսի, նո.8: Ստորագր. Շմեղ: Հոգևորականության երգիծումը:

67. ՔԵԱԼԼԱԳԵՈԶ: Իշի նաղլը:/Զափածո/: 1921,8 մայիսի,նո.5: Ստորագր. Քեալլագեոզ: Ընդդեմ նախկին մինիստրների, որոնք ցնդամիտ հույսերը փայփայում են նախկին կարգերի վերականգնման մասին:



ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

## ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ

68. ԱԹ-ՈՅՐ։ Մթնր-մունր։ 1921, 12 հունիսի, նո.8։ Ստորագր. Աթոյր։ Կնոջ արժանիքների, նրան սիրելու, նրա հետ վերաբերվելու մասին։ Այլ զվարճալիքներ։

69. ԱՇՈՒՂՅԱՆ։ Սիրականը։/Մանր-մունր/։ 1921, 12 հունիսի, նո.8։ Ստորագր.Աշուղյան։Սիրական Տիգրանյանի և կաթողիկոսի մասին։

70. ԾՈՎԻԿ։ Ինչո՞ւ չէ շատ չաղանում... 1921, 15 մայիսի,նո.6։ Ստորագր. Ծովիկ։ Նորաստեղծ խորհրդային իշխանության մեծ հնարավորությունները և ազնիվ աշխատանքը որպես դրանց իրականացման միջոց։

71. ՄԱՆԵԿՈՂ։ Ինչպես դարձա ես միլիոնատեր։ 1921,10 ապրիլի, նո.1։ Ստորագր. Մանեկող։ Հին արժեզրկված դրամը շրջանառությունից հանելու մասին։

72. Ո՞նց չը ցավիմ։ /Մանր-մունր/։ 1921,15 մայիսի, նո.6։ Անստորագիր։ Կենցաղային հարցեր /հումոր/։

73. Ս.։ Առաջին շաբաթօրյակը Թիֆլիսում։ 1921,29 մայիսի, նո.7։ Ստորագր. Ս.։ Շաբաթօրյակը նոր ապրելակերպի արտահայտություն։

74. ՎԵՀԱՐԱՆՈՒՄ։ /Մանր-մունր/։ 1921, 29 մայիսի, նո.7։ Անստորագիր։ Գևորգյան ճեմարանի ուսուցիչի, նրա կնոջ և կաթողիկոսի մասին։

75. ՎՐՈՒՅՐ ԱՐԱՄ։ Կնիկը։/Զափածո առակ/։ 1921,10 ապրիլի, նո.1։ Կանանց հնարամտության մասին։

76. ՔԱՄԱԼՅԱՆ ՍԱՐԳԻՍ։ Պարտքի վճարումը։/Մանր-մունր/։ 1921։ 15 մայիսի, նո.6։ Ստորագր. Շմեղ /հումոր/։

## ԾԱՂՐԱՆԿԱՐՆԵՐ-ՆԿԱՐՆԵՐ

77. ԱՔԼՈՐ։/Կարմիր գույնի, արևի ֆոնի վրա։ Նկարիչը չի նշված/։ 1921, 10 ապրիլի, նո.1։ 17 ապրիլի, նո.2։ 24 ապրիլի,նո. 3։ 1 մայիսի, նո.4, 8 մայիսի, նո.5, 15 մայիսի,նո.6, 29 մայիսի,նո.7, 12 հունիսի, նո.8։

78. ԿՈՎԿԱՍՅԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ և Ռուսաստանն ու Անգլիան։/Նկարիչը և քառատողերի հեղինակը չի նշված/։1921,10 ապրիլի,նո.1։ Փառաբանում է Ռուսաստանին, որը ազատություն է տվել ժողովրդին և հրսկում է նրա խաղաղ աշխատանքը։

79. ԺԵՊԵՑԱՆ ԲԱՐԴՈՒՂԻՄԵՈՍ։Անդրկովկասյան հանրապետությունները։ Ինչ են ուզում։ Ինչ ստացան... Մենշևիկները, դաշնակները, մուսավաթականները /մեծադիր նկար/։ 1921,17 ապրիլի;նո.2։ Նկարչի ստորագր. Բ.Ժեպե։

80 ԺԵՊԵՑԱՆ Բ. ,,Կարմիր աքլորի,, խմբագրության խուզարկության հետևանքները,1921,17 ապրիլի, նո.2։ Նկարչի ստորագր. Ժեպե։ Նկարում բազմահարկ շենքերի Ֆոնի վրա լրագրի խմբագիր Մ.Դարբինյանի մեծադիր նկարը՝ դիրիժորական Ֆրակով։ Երկու ձեռքերով բնակարաններից դուրս է քաշում բանկիրին, գործարանատիրոջը և նման կարգի նախկին այլ պաշտոնատերերին՝ շենքը աշխատավոր մարդկանց տրամադրելու համար։

81. ՎԱՆՈ։ Թիֆլիսի բուրժուաները։ Երեկ։ Այսօր։1921,10 ապրիլի, նո.1։ Նկարչի ստորագր. Վանո։ Ընդդեմ բուրժուաների, որոնք առաջին նկարում պատկերված են իրենց աղայական դիրքով, իսկ երկրորդ նկարում հագել են բանվորական հագուստ և կապել կարմիր ժապավեն։

82. B.։ Հայաստանում։ 1921։ 10 ապրիլի, նո.1։ Նկարչի ստորագր. B.։Քառատողի հեղինակը չի նշված։ Ընդդեմ Անտանտի, որը հայ ժողովրդին բաժանել է երկու բանակի և կովի հանել իրար դեմ։

83.B. ։ Ն.Ն.Ժորդանիան։ 1921,24 ապրիլի, նո.3։ Նկարչի ստորագր. B.։մենշևիկ լիդերների մերկացումը։

84.B.։ Մեկը մայիսի, 1921։ 1 մայիսի, նո.4։ Ստորագր.B.։ Բանվորների մայիսմեկյան շքերթի տեսարան՝ երկրագնդի Ֆոնի վրա։ Նրանց դրոշների վրա տարբեր լեզուներով գրված է.,,Պրոլետարներ բոլոր երկրների, միացեք,,։

## ,,ԿԱՐՄԻՐ ԱՔԼՈՐԻ,, ՄԱՍԻՆ ԳՐՔԵՐՈՒՄ ԵՎ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐՈՒՄ

85. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԱՄԱԼՅԱ։ Հայ պարբերական մամուլի մատենագիտություն։

/1794-1967/. -Ե.: 1970. -623 էջ:
Կարմիր աքլորի մասին, էջ 100,497,532:
էջ 100-ում գրված է նո.533, Կարմիրաքլոր: Երգիծաքանական, սատիրական շաբաթաթերթ: Թիֆլիս, Տպ. ,,Պրոգրես,, , 1921, 4 էջ: /43 x31/սմ Պատ. խմբագիր Մաթևոս Դարբինյան: Շաբաթաթերթի համարները պահվում են. Մատենադարանում նո.1: Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղում նո.5:

86. ՄԽԻԹԱՐՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ: Վրաստանի սովետահայ գրականությունը:-Ե., Հայաստան, 1966, -269 էջ:
Կարմիր աքլորի մասին, էջ 38,116....

87. ՄԵԼՅԱՆ Բ.Գ. Մաթևոս Դարբինյան:/Կենսամատենագիտություն/:-Ե., 1970,-313 էջ:
Կարմիր աքլորի մասին, էջ 63, 69,70,101,124,125,141,146,169, 172,291:

- ooo -

88. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՇՈՏ: ,,Մաթևոս Դարբինյան: Կենսամատենագիտություն: Կազմող՝ Բ.Գ.Մելյան: Խնկո-Ապոր անվան հանրապետական մանկական գրադարանի հրատ., Երևան 1970, -313 էջ: -Սովետ. գրականություն, 1971, նո.7, էջ 152-153:

89. ՄԵԼՅԱՆ Բ.Գ. Շաբաթաթերթի լույս ընծայման 60-ամյակը:/,,Կարմիր աքլորի,, լույս ընծայման առթիվ/:-Մանկավարժ:/Երևան/: 1981,12 հունիսի, նո.19:
90. ՄԵԼՅԱՆ Բ.Գ.Մ.Դարբինյանի,,Կարմիր աքլոր,,շաբաթաթերթը.-Այգաբաց,1981,27 օգոստոսի,նո.101:

## ,,ԿԱՐՄԻՐ ԱՔԼՈՐԻ,, ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՄԱՐՆԵՐԻ

### 10 ապրիլի նո.1

Նկար. Կարմիր աքլոր:/Նկարիչը չի նշված/:-Խմբագրության կողմից:/ ,,Կարմիր աքլորին,, թղթակցելու մասին/:-Ծուղրուղու... /Չափածո, շաբաթաթերթի խոսքը: Հեղինակը չի նշված, բայց Մ. Դարբինյանն է/:- Դարբինյան Մ. Մեր աքլորը:/Առաջնորդող: Ստորագր. Դարբին/:-Կարմիր աքլորը սրտի անհուն կսկիծով... - Նկար. Թիֆլիսի քուրժուաները՝ երեկ, այսօր: Նկ. Վանո: - Հատիկը: Ստորագր. Դոմինո:-Դոշոյան Արտ. Մենշևիկների

վերջին րոպեները Թիֆլիսում: Ստորագր. Դոշ: -Նկար.Հայաստանում: Նկ. Նշված է ռուսերեն մեծատառ Վ: Ցինկը՝ Սողոմոնյան և Սյուաճյան:-Վրույր Ա. Կնիկը:/Չափածո առակ/:-Կարմիր աքլորի քաջագործությունները Ստորագր. Հաննի:-Դարբինյան Մ. Էշը-Մարգարե:/Չափածո առակ/: Ստորագր. Ասլան:-Նկար. Կովկասյան ժողովուրդները և Ռուսաստանը, Անգլիան: Նկ. Չի նշված: Ցինկը՝ Սողոմոնյան և Սյուաճյան:-Ինչպես դարձա ես միլիոնատեր: Ստորագր. Մանեկող:

17 ապրիլի նո.2

Նկար. Կարմիր աքլոր:/Նկարիչը չի նշված/:-Ծուղրուղու.../Չափածո, շաբաթաթերթի խոսքը/:-Խմբագրության կողմից:/,,Կարմիր աքլորին,, Թըղթակցելու մասին/:-Դարբինյան Մ. Դեկլարացիա:/Առաջնորդող/: Ստորագր. Դարբին: - Մի գրվանքա հացը:/Հայ ուսուցչի ծանր ապրելակերպի մասին/: Ստորագր. Ծովիկ:-Ատրպետ: Էդ դրախտը չեմ մտնի: Ստորագր. Ա-Տ: -Նկար. Անդրկովկասյան հանրապետությունները: Նկ. Բ.ճեպե.:-Դոշոյան Արտ. Տերտերի գանգատը: Ստորագր. Տեր. Կեճճօ, միաբան Բողզավանքի ու եկեղեցու: Արտագրեց՝ Դոշ.:-Աղաբաբ Հակոբ: Կանչը:/Չափածո/: Ստորագր. Ալմազ:-Ղուկաս: Նորագույն պատմություն:-ճեպեյան Բ.,,Կարմիր աքլորի,, խմբագրի խուզարկության հետևանքները: Նկ.Բ. ճեպե.:

24 ապրիլի նո.3

Նկար. Կարմիր աքլոր:/Նկարիչը չի նշված/:-Խմբագրության կողմից: /,,Կարմիր աքլորին,, Թղթակցելու մասին/:- Ծուղրուղու.../Չափածո, շաբաթաթերթի խոսքը: Հեղինակը չի նշված/:-Դարբինյան Մ. Լսեցեք:/Չափածո/: Ստորագր. Դ.: Դարբինյան Մ. Տիրացու Պասկևիչը: /Առաջնորդող/: Ստորագր. Դարբին:-Դոշոյան Արտ. Կուսակցությունների համագումարը Թիֆլիսում: Ստորագր. Աքլորյան:-Նկար.Ն.Ն. Ժորդանիա /Զարմացած/: Նկ. B.: -Փոստ-արկղ: Թիֆլիս, Կարմիր Գուսանին:/Չափածո/: Անստորագիր:- Դոշոյան Արտ. Տակսան:/Չափածո/: Ստորագր. Դօշ.: Ծովիկ: Աթոռները:/Մի մասը չափածո/: Ստորագր. Ծովիկ:-Ստամբոլցյան Անուշավան: Անկետա: Ստորագր. Աստղ:-Խաչմանյան Հմայակ: Նամակներ:/Ընդդեմ փախած մինիստըրների/: Ստորագր. Դեվ:

1 մայիսի նո.4

Նկար. Կարմիր աքլոր. /Նկարիչը չի նշված/:-Խմբագրության կողմից: /,,Կարմիր աքլորին,, Թղթակցելու մասին/:-Ծուղրուղու.../Չափածո,շաբաթաթերթի խոսքը/: -Դարբինյան Մ. Մայիսի մեկը - Զատիկ:/Առաջնորդող: Մի մասը չափածո/: Ստորագր. Դարբին: -Դարբինյան Մ. Բոլորին հայտնի

պատմություն:/Մայիսի մեկի առթիվ/: Ստորագր. Ասլան:- Ծերուկ: Իմ զատկական նվերները: /Նաև չափածո հատվածներ/: Ստորագր. Ծերուկ:- Կեցցե երրորդ ինտերնացիոնալը:/Լոզունգ/:-Կեցցե համաշխարհային հեղափոխությունը ղեկավարող Կարմիր Մոսկվան:/Լոզունգ/:-Դոշոյան Արտ. Ողջույն նրան... /Նվեր՝ բանվորներին իրենց հարազատ տոնի՝ մայիսի մեկի առթիվ: Չափածո/: Ստորագր. Դոշ:-Թաչմանյան Հմայակ: Հեռագրեր ու ռադիոներ: Ստորագր. Դեվ: -Տալյան Գրիգոր:,,Արի աքլոր, կարմիր աքլոր,,:/Չափածո, մայիսի 1-ի առթիվ/: Ստորագր. Գր. Տալ.: /Իր որդի, մանկական գրող Վազգեն Տալյանի վկայությամբ Գուսան Շերամն է/: - Դարբինյան Մ. Քոթոթը:/Պատմվածք/: Ստորագր. Մա-Դո:- B.:-Նկար. 1-ը մայիսի; Ստորագր.նկ. B.:

8 մայիսի նո.5

Նկար. Կարմիր աքլոր:/Նկարիչը չի նշված/:-Խմբագրության կողմից; /,,Կարմիր աքլորին,, Թղթակցելու մասին/:-Ծուղրուղու... /Չափածո, Շաքաթաթերթի խոսքը/:-Դարբինյան Մ.Մի շաբաթ:/Արձակ նաև չափածո/: Ստորագր. Դարբին:-Գ.Մ.Խ.:Միխկս զալիս ին: Ստորագր. Գ.Մ.Խ.:-Դոշոյան Արտ. Կարմիր աքլորին:/Չափածո/: Ստորագր: Ալմազ:- Դարբինյան Մ. Ինտերվյու: Ստորագր. Ասլան:-Վրույր Ա.Նոր հարուստները:/Չափածո/: Ստորագր. Ֆաքիր: -Ծովիկ: Ա՜խ, ինչո՞ւ կուլ չտվի.../Ընդդեմ դաշնակցության/: Ստորագր. Ծովիկ:-Կարմիր աքլորը: Անստորագիր:-Իշի նաղլը: /Չափածո/: Ստորագր. Քեալլագեօզ: -Թաչմանյան Հմայակ: Նամակներ: Ստորագր. Դեվ: -Փոստ-արկղ: /Նամակների պատասխաններ, նաև չափածո/: Անստորագիր:

15 մայիսի նո.6

Նկար. Կարմիր աքլոր:/ Նկարիչը չի նշված/:-Խմբագրության կողմից: /,,Կարմիր աքլորին,, Թղթակցելու մասին/: -Ծուղրուղու... /Չափածո, շաբաթաթերթի խոսքը/:-Դարբինյան Մ.Պատերազմ:/Առաջնորդող, ընդդեմ իմպերիալիստական երկրների/: Ստորագր. Դարբին:-Աշուղյան: Խրիմյան և իշխան Գոլիցին: Ստորագր. Աշուղյան:-Ծովիկ: Ինչու չէ շատ չաղանում Ստորագր. Ծովիկ:-Ստամբուլցյան Անուշավան: Փործանքների բժշկարան: Ստորագր. Աստղ:-Խոճիկ Էդուարդ: Ուժը:/Չափածո առակ/:-Կոկռան-Մարիկ: Ռեցենզիուս:/Շիրվանզադեի ,,Պատվի համար,, դրաման բեմադրելու առթիվ/: Ստորագր. Կոկռան-Մարիկ:-Դարբինյան Մ. Ինտերվյու: Ստորագր. Ասլան: - Ո՞նց չը ցավիմ:/Մանր-մունր/: Անստորագիր:-Քամալյան Սարգիս: Պարտքի վճարումը:/Մանր-մունր/: Ստորագր. Շմեղ:

### 29 մայիսի նո.7

Նկար. Կարմիր աքլոր:/Նկարիչը չի նշված/:-Խմբագրության կողմից: /,,Կարմիր աքլորին,, Թղթակցելու մասին/:-Ծուղրուղու... /Չափածո, Շաբաթաթերթի խոսքը/:-Մայիսի 26-ը: /Առաջնորդող/: Անստորագիր:-Վրույր Արամ: Կեցցե փոքր ազգությունների իրավունքների պաշտպան Խորհրդային Ռուսաստանը:/Լոզունգ, կոչ/:-Դոշոյան Արտ. Երկու աքլոր: /Չափածո առակ/: Ստորագր. Աքլորունի:-Վեհարանում:/Մանր-մունր/: Անստորագիր: -Համբերություն:/Մանր-մունր/: Անստորագիր: -Վրույր Արամ: Յ. Ոսկանյանի կոլեկտիվի ներկայացումները ,,Ազատ թատրոնում": Ստորագր. Աքանդազյան:-Երիցյան Աստվածատուր: Մեր քաղքի խաբարները: Ստորագր. Կակուլի: -Փոստ-արկղ: Անստորագիր:-Ընկերներ, թերթը շատ սակավ է տպագրվում, մի պատռեք, և կարդացեք խմբերով: Անստորագիր: -Ստամբոլցյան Անուշավան: Անկետա: Ստորագր. Աստղ:-Վրույր Արամ: Իմ հուշատետրից: Ստորագր. Ա.Վ.:- Ս.: Առաջին շաբաթօրյակը Թիֆլիսում: Ստորագր. Ս.: - Տեգ: Ինչպես է պլրում ,,խեղճ,, սպեկուլյանտը: Ստորագր. Տեգ[1]:

### 12 հունիսի նո.8

Նկար. Կարմիր աքլոր:/Նկարիչը չի նշված/: -Խմբագրության կողմից: /,,Կարմիր աքլորին,, Թղթակցելու մասին/:-Ծուղրուղու... /Չափածո, շաբաթաթերթի խոսքը/:-Դարբինյան Մ. Բարի տեսություն:/Առաջնորդող/: Ստորագր. Դարբին:-Դարբինյան Մ. Տիկին Շուշանի դպրոցը:/Շուշան Մանուկյանի դպրոցի մասին, որը գտնվում է մի փոքրիկ սենյակում/: Ստորագր. Դոմինո: -Խաչմանյան Հմայակ: Նամակներ: /Ընդդեմ ազգային կուսակցությունների լիդերների, որոնք փախել են երկրից/: Ստորագր. Դեվ: -Ծովիկ: Կորեկի պատմությունը: /Արծակ առակ/: Ստորագր. Ծովիկ: -Կարմիր աքլոր: Նժդեհը: /Ընդդեմ Նժդեհի, որը ծվարել էր Զանգեզուրում և կողոպտում էր ժողովրդին/: Ստորագր. Կարմիր աքլոր: Գործ ըրինք:/Չափածո: Ընդդեմ Հնչակ ու դաշնակ կուսակցությունների/: Ստորագր. ԿՕԿ: -Ստամբոլցյան Անուշավան: Փործանքների բժշկարանը: /Ընդդեմ մի շարք հայ նացիոնալիստական կուսակցությունների/: Ստորագր. Աստղ:- Դիմակ: Մատների գրողները: /Հովհ. Թումանյանի և Լեոի մասին, որոնց ինչ-որ մարդիկ գրող չեն համարում/: Ստորագր. Դիմակ:-

----------

1. ,,Կարմիր աքլորի,, նո.7-ը խմբագրել է Արամ Վրույրը /ըստ Աշոտ Հայրապետյանի վկայության/: Ստորագրված է խմբագրական կոլեգիա: Մ. Դարբինյանին հրավիրել էին Երևան կուսակցական աշխատանքի նշանակելու, բայց նա հրաժարվել է:

-Հայտարարություն:/Պատերազմի պատճառով երկրից փախածների ու նրանց վերադարձին դիմավորելու մասին/: Անստորագիր:-Քամալյան Սարգիս: ,,Պահպանիչը,,-փոր չի կշտացնի:/Ընդդեմ հոգևորականության/: Ստորագրր. Շմեղ:- Սեզոնի փակումը:/Գեղարվեստ/: /Քննադատում է Պետական առաջին թատրոնի թատերացանկը և հունիսի 9-ին՝ սեզոնը շուտ փակելու առթիվ/: Ստորագր. Կոկոան-Մարիկ: -Աշուղյան: Սիրականը: /Երգիծական միջադեպ կապված Հայոց կաթողիկոսի և Սիրական Տիգրանյանի հետ/: Ստորագր. Աշուղյան: -Մանր-մունր:/Կնոջ և նրա հետ վարվելակերպի մասին/: Ստորագր. Աթ-ոյր[1]:

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

------------

1 Հայ պարբերական մամուլի մատենագիտություն:/1794-1967/: Համահավաք ցանկ: Կազմեց Ա.Կիրակոսյան:-Եհ,1970, -623 էջ: ,,Կարմիր աքլոր: Երգիծաքանական, սատիրական շաբաթաթերթ: Թիֆլիս, Տպ.,"Պրոգրես,, 1921, 4 էջ: /43 31/սմ.:Պատասխանատու խմբագիր՝ Մաթևոս Դարբինյան: Հիշատակվում է, որ թերթի օրինակներից եզակի համարներ կան միայն Մատենադարանում նո.1-ը և Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի գրադարանում նո.5-ը, էջ 100: Դրան պետք է ավելացնել, որ Երևանի Ե.Չարենցի անվան արվեստի ու գրականության՝ թանգարանի Մ.Դարբինյանի ֆոնդում պահպանվում է նո.2 -8-ը: Մ.Արազու ֆոնդում՝ նո.1-ը: Դրանից լուսատիպով մեր կողմից հանվել է մի քանի օրինակ, մեկը տրվել է Մ.Դարբինյանի ֆոնդում նույն համարի տակ պահելու: Մ.Արազու ֆոնդ նո.553: Մ.Դարբինյանի ֆոնդ նո.398: Այսպիսով,Մ.Դարբինյանի ֆոնդում պահվող համարների հիման վրա էլ կազմվել է այս մատենագիտությունը: Վերջին՝ նո.8-ում ոչինչ չի հիշատակված շաբաթաթերթի դադարեցման մասին:

ՎԵՐՆԱԳՐԵՐԻ ՑԱՆԿ

Աթոռներ 51
Ախ, ինչո՞ւ կույլ չավի... 52
Անդրկովկասյան հանրապետությունները /նկար/ 79
Անկետա /Անուշավան Ստամբուլցյան/ 60,61
Առաջին շաքաթօրյակը Թիֆլիսում 73
Արի աքլոր, կարմիր աքլոր /Շերամ/ 14
Աքլոր /նկար/ 77

Բարի տեսություն 37
Բոլորին հայտնի պատմություն 3

Գործ ըրինք 57

Դեկլարացիա 38

Երկու աքլոր 42

Էշը-Մարգարե 39
Էդ դրախտը չեմ մտնի 34

Ընկերներ 26

Թիֆլիսի քուրծուանները /նկար/ 81
Թիֆլիս, Կարմիր զուսանին 65

Ժորդանիա Ն.Ն. /նկար/ 83

Իմ զատկական նվերները 4
Իմ հուշատետրից 28
Ինչպես դարծա ես միլիոնատեր 71
Ինչպես է ապրում ,,խեղճ,,սպեկուլյանտը 63
Ինչու չէ շատ չաղանում 70
Ինտերվյու 5
Իշի նաղլը 67

Լսեցեք 24

Խմբագրության կողմից 20
Խրիմյան և իշխան Գոլիցին 2

Ծուղրուղու 21

Կանչը 1
Կարմիր աքլոր /վերնագիր է/ 55
Կարմիր աքլորըսրտի անհուն կսկիծով... 56
,,Կարմիր աքլորի,, խմբագրության խուզարկության հետևանքները /նկար/ 80
Կարմիր աքլորին 25
Կարմիր աքլորի քաջագործությունները 35
Կեցցե երրորդ ինտերնացիոնալը 17
Կեցցե փոքր ազգությունների իրավունքների պաշտպան Խորհրդային Ռուսաստանը 19
Կնիկը 75
Կովկասյան ժողովուրդները և Ռուսաստանն ու Անգլիան /նկար/ 78
Կորեկի պատմությունը 53
Կուսակցությունների համագումարը Թիֆլիսում 43

Համբերություն 58
Հայաստանում /նկար/ 82
Հայ պարբերական մամուլի մատենագիտություն 85
Հայտարարություն 59
Հատիկը 40
Հեռագրեր ու ռադիոներ 12

Մ.Դարբինյանի ,,Կարմիր աքլոր,, շաբաթաթերթը 90
Մաթևոս Դարբինյան 87
Մայիսի մեկը - Ջատիկ 6
Մայիսի 26-ը 13
Մանր-մունր 68
Մատների գրողները 23
Մեկը մայիսի /նկար/ 84
Մենշևիկների վերջին րոպեները Թիֆլիսում 44
Մեր աքլորը 22
Մի գրվանքայ հացը 16
Միկս գալիս ին 36
Մի շաբաթ 7
Միր քաղքի խաբարնիրը 11

Յ.Ոսկանյանի կոլեկտիվ ներկայացումները ,,Ազատ Թատրոնում,, 33

Ն.Ն.Ժորդանիա /նկար/ 83
Նամակներ 47, 48, 49
Նժդեհը /վերնագիր է/ 54
Նորագույն պատմություն մը 18
Նոր հարուստները 64

Շաքաթաթերթի լույս ընծայման 60-ամյակը 89

Ողջույն նրան 10
Ո՞նց չցավեմ 72

,,Պահպանիչը,,-փորը չի կշտացնում 66
Պատերազմ 8
Պարտքի վճարումը 76

Ռեցենզիաս 31

Սեզոնի փակումը 32
Սիրականը 69

Վեհարանում 74
Վրաստանի սովետահայ գրականությունը 86

Տակսան 45
Տերտերի զանգատը 46
Տիկին Շուշանի դպրոցը 15
Տիրացու Պասկևիչը 41

Ուժը 50

Փոստ-արկղ 29,30,65
Փորձանքների բժշկարան 27,62

Քոթոթը 9

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ


Աբել յան Պողոս /5/

Աթանասյան Աշոտ /30/

Աթ-ոյր 68

Ալմազ տես Դոշոյան Արտաշես

Ալմազ տես նաև Աղաբաբ Հակոբ

Աղաբաբ Հակոբ 1

Աշուղ Ջիվանի /33/

Աշուղյան 2, 69

Ասլան տես Դարբինյան Մաթևոս

Աստղ տես Ստամբոլցյան Անուշավան

Ա.Վ.տես Վրույր Արամ

Ա-Տ տես Ատրպետ

Ատրպետ 34, /30/

Արազի Մովսես 35

Աքանդազյան տես Վրույր Արամ

Աքլորյան տես Դոշոյան Արտաշես

Աքլորունի տես Դոշոյան Արտաշես

Բաքախանյան Առաքել տես Լեո

Գ.Մ.Խ. 36

Գոլիցին /2/

Գր. Տալ. տես Շերամ

Դ.տես Դոշոյան Արտաշես

Դարբին տես Դարբինյան Մաթևոս

Դարբինյան Մաթևոս 3,4,5,6,7,8,9,14,15,20,21,22,37,38,39,40,41, /I4, 53,80,85,87,88,90/:

Դարվին Չարլզ /27/

Դեվ տես Խաչմանյան Հմայակ

Դիմակ 23

Դոմինո տես Դարբինյան Մաթևոս

Դոշ. տես Դոշոյան Արտաշես

Դոշոյան Արտաշես 10,24,25,42,43,44,45,46:

Երիցյան Աստվածատուր 11

Երեմյան /31/

Երզնկյան Արամայիս /5/
Երմեր /30/

Էք-Սյուզ /30/

Թորոսյան /31/
Թումանյան Հովհաննես /23,35/

Ժորդանիա Ն.Ն. /83/

Լալայան Երվանդ /27/
Լենին Վլադիմիր Իլյիչ /11,12 /
Լեո /5,23,30/
Լիբկնեխտ Կարլ /8/
Լորիկ-Նետ /30/
Լյուքսեմբուրգ Ռոզա /8/

Խաչմանյան Հմայակ 12,47,48,49
Խոճիկ Էդուարդ 50
Խրիմյան Հայրիկ /2/

Ծերուկ տե՛ս Դարբինյան Մաթևոս
Ծովիկ 16,51,52,53,70

Կակուլի տե՛ս Երիցյան Աստվածատուր
Կարա-Դարվիշ /27/
Կարմիր աքլոր /որպես հեղինակ/ 54
Կլդիա /35/
Կիրակոսյան Ամալյա 85
Կոկ /Կօկ/ 57
Կոկռան-Մարիկ 31,32

Հայկուհի /31/
Հայրապետյան Աշոտ 88 /24/
Հաննի տե՛ս Արազի Մովսես
Հաջիբեկով Ուզեիր /33/
Հեքիմ Նիկոլի տղա Գևո /30/

Ղուկաս 18

Ճեպե տե՛ս Ճեպեյան Բ.
Ճեպեյան Բարդուղիմեոս /նկ./ 79,80

Մա-Դո տե՛ս Դարբինյան Մաթևոս
Մալխասյան Հովհաննես /5/
Մամուլյան /31/
Մանեկող /ծածկանուն է/ 71
Մանուկյան Շուշան /15/
Մարինետտի /դոկտոր/ /27/
Մարկոս Բեգ /40/
Մելյան Բալաբեկ Գրիգորի 87,89,90 /88/
Մեր Կեճճո՝ միաբան Բողազավանքի ու եկեղեցու տե՛ս Դոշոյան Արտաշես
Մխիթարյան Արտաշես 86
Նազարյան Տիգրան /5/
Նավասարդյան Բագրատ /5/
Նժդեհ /4,54/

Շերամ 14
Շիրվանզադե /31,33/
Շմեղ տե՛ս Քամալյան Սարգիս

Ոսկանյան Հովսեփ /33/

Պասկևիչ /ռուսական զորքերի հրամանատար/ /41/

Ջիվանի տե՛ս Աշուղ Ջիվանի

Ռամիշվիլի Նոյ / Մենշևիկյան Վրաստանի ներքին գործերի մինիստր//35/
Ռշտունի /31/

Ս. 73
Սալ-Ման տե՛ս Աթանասյան Աշոտ
Ստամբոլցյան Անուշավան 27,60,61,62

Վանո /նկ./ 81
Վրացյան Ս. /4,41,52/
Վրույր Արամ 19,28,33,63,64,75
/նկ./ 82,83,84

Տալյան Գրիգոր տե՛ս Շերամ

Տեգ. տե՛ս Վրույր Արամ
Տեր-Առաքելյան Մ. /33/
Տեր-Գրիգորյան Արամ /5/
Տիգրանյան Սիրական /69/

Քալանթար Լևոն /4/
Քամալյան Սարգիս 66, 76
Քեալլագեօզ 67

Փաքիր տե՛ս Վրույր Արամ
Փուլդա Լյուդվիգ /32/

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


,,Կարմիր աքլոր,,/առաջաբան/. . . . . . . . . . . . . . . . . . 4

Նշանավոր դեմքեր ու դեպքեր. . . . . . . . . . . . . . . . . . 9

Լուսավորություն, կրթություն. . . . . . . . . . . . . . . . 11

Գրականության և մամուլի հարցեր. . . . . . . . . . . . . . . 12

Թատերական հարցեր. . . . . . . . . . . . . . . . . . . . . 13

Հասարակական-քաղաքական բնույթի նյութեր. . . . . . . . . . . 14

Կենցաղային նյութեր. . . . . . . . . . . . . . . . . . . . 18

Ծաղրանկարներ - նկարներ. . . . . . . . . . . . . . . . . . 18

,,Կարմիր աքլորի,, մասին գրքերում և պարբերականներում . . . 19

,,Կարմիր աքլորի,, բովանդակությունը ըստ հերթական համարների. 20

Վերնագրերի ցանկ. . . . . . . . . . . . . . . . . . . . . . 25

Անվանացանկ. . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 28

ԲԱԼԱԲԵԿ ԳՐԻԳՈՐԻ ՄԵԼՅԱՆ

,,ԿԱՐՄԻՐ ԱՔԼՈՐ,, ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Խմբագիր Ա.Ա.ԽԱՌԱՏՅԱՆ

© ЦЕНТР НАУЧНОЙ ИНФОРМАЦИИ ПО ОБЩЕСТВЕННЫМ НАУКАМ АН АРМЯНСКОЙ ССР

Հանձնված է արտադրության 28.5.1982թ. Տպագրական 2 մամուլ, Թուղթը 60 · 84

Պատվեր 146 Գինը 25 կոպ. Տպաքանակ 150

---

Երևանի պետական համալսարանի Ռոտապրինտ տպագրական արտադրամաս, Երևան, Մռավյան փող.նո.1

Գինը 25 կոպ.

A ıı
68296